



ԳՈՒՐԳԵՆ  
ՄԱՀԱՐԻ

ՍԵՐ ԱՌ ԵՐԵՎԱՆ

*1960-ականներին Գուրգեն Մահարին գրում էր մանրապատումների մի շարք, որն անվանել էր «Քանդակներ»: Բովանդակային բազմազանությամբ օժտված շարքում կային նաև գործեր, որտեղ արտահայտվում էր գրողի վերաբերմունքն այդ օրերի քաղաքական իրավիճակի ու միջազգային անցուդարձի նկատմամբ: Դրանցից մեկն էլ այս հատվածն է, որը Մահարին վերնագրել է «Չինական թվաբանություն»: Գրվել է 1963 թվականին: Հրատարակվում է առաջին անգամ (Հ. Չարխչյան):*

### **«ՉԻՆԱԿԱՆ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»**

Չարմանալի մարդիկ են չինացիները:

Ասենք, ոչ թե չինացիները, այլ այս մեծ ժողովրդի, ինչպես ընդունված է ասել, դեկավար շրջանները:

Նրանք գտնում են, որ կարելի է մի քանի միլիոն չինացի և ոչ չինացի զոհել հանուն մարդկության երջանկությանը: Այդ նորօրյա փանջունիները երագում են մարդկային երջանկության հաղթանակը Ծապլվարի, տվյալ դեպքում՝ հողագնդի ավերակների վրա:

Այս՝ միևնույն է, թե ասել, հանուն անասնապահության բարձրացման, անհրաժեշտ է մի քանի միլիոն մանր և խոշոր եղջերավոր անասուն մորթել:

Մենք չգիտենք՝ չինական դեկավարները իրենց մանր, թե՞ խոշոր եղջուրավոր են համարում, մենք կուզենայինք միայն, որ այս խնդիրը դրվեր քվեարկության: Այն ժամանակ հայտնի կլիներ, թե քանի չինացի է երագում մեռնելու մասին: Իսկ դեկավարները... Մտնում են արդյոք նրանք մեռնողների թվի մեջ: Այն ժամանակ կերևար այս Չարմանալի թվաբանության ողջ անհեթեթությունը:

Գալով ոչ չինացիներին՝ նրանք մեռնել չեն ուզում: Որովհետև հանուն մարդկության երջանկության ոչ թե մեռնել, այլ ապրել ու աշխատել է հարկավոր:

Հօգուտ սրա կքվեարկի ողջ մարդկությունը, չին ժողովուրդն էլ հետը: Ղեկավար շրջաններն էլ, ամենայն հավանականությամբ, առանձին ախորժակ չունեն մեռնելու:

Էլ ո՞վ պիտի մեռնի:

Սա ինչ անօրինակ, տարօրինակ չինական տրամաբանություն է...

*«Եթե չես կարող գրել բանաստեղծություններ զանազան հարգելի և ոչ հարգելի պատճառներով և եթե չես կարող գրել պատմվածքներ, որովհետև հերոսներդ դեռ չեն տիպականացել, մի հուսահատվիր, նստիր ու գրիր քանդակներ: Մի թողնի, որ ժանգոտի գրիչդ, դրանից էլ ժանգոտում է սիրտդ ու հոգիդ, հավատա», - այսպիսի խորհուրդ էր տալիս գրչակից ընկերներին հայ նշանավոր գրող Գուրգեն Մահարին (1903-1969), և կարծես թե ինքն էլ մնաց միակը, ով հետևեց իր իսկ խորհրդին ու թղթին հանձնեց բազմաթիվ փոքրածավալ, սակայն սրամիտ, հուզիչ, խորիմաստ պատմություններ ժամանակի, մարդկանց, հիշողության ու կարոտի մասին: Ցավոք, հեղինակի կենդանության օրոք դրանցից շատերն այդպես էլ չհասան ընթերցողին: Երկու արտոն ու ստալինյան ճամբարների սոսկումներն ապրած Մահարու գրական ժառանգության մի սովոր հատված գրաքննության թեթև ձեռքով դրվեց ծանր փակի տակ, որոշ գործեր խմբագրությունները մերժեցին ամենաանհեթեթ և անլուրջ պատճառաբանություններով: Եվ միայն այսօր այդ ձեռագրերը դուրս են բերվում թղթապանակներից՝ ամբողջացնելով ու էլ ավելի հարստացնելով արձակագիր Մահարու աշխարհընկալման ներկայանակը:*

*Նման ճակատագրի արժանացած գործերի թվին է դասվում նաև «Երևանյան քանդակներ» ընդհանուր խորագիրը կրող մանրապատումների այս շարքը, որը թվագրված չէ, բայց ամենայն հավանականությամբ գրվել է 1960-ականների սկզբներին: Ձեռագրում որոշ տողեր կրճատված կամ փոփոխված են հենց հեղինակի գրչով, մի քանի հատվածներ անընթեռնելի են, կան էջեր, որտեղ անկնատու է կողմնակի միջամտության կամ խմբագրման պարտադրանքը (օրինակ Վ. Մարոյանին նվիրված հատվածում Մարոյանի անունը ջնջված է և փոխարենը գրված՝ «գրող, որն ապրում է Ամերիկայում»): Այդ իսկ պատճառով մենք նպատակահարմար գտանք ստորև հրապարակվող գործը ներկայացնել իր նախնական մտահղացմամբ ու բովանդակությամբ:*

*Ինչպես մի առիթով իրավացիորեն նկատել է բանաստեղծ Համո Մահյանը՝ «Մահարու վրիպակներն անգամ տաղանդավոր են»: Եվ եթե*

*Մահյանի խոսքը համարենք սրամիտ չափազանցություն, ապա չենք կարող չխոստովանել, որ նման գնահատանքն ասված է ոչ հանիրավի, այլ ըստ արժանվույն (Հ. Չարիսյան):*

*Հովիկ ՉԱՐԽՉՅԱՆ*

## **ԵՐԵՎԱՆՅԱՆ ՔԱՆԴԱԿՆԵՐ**



Image@Armenianhouse.org

### ***Որպես նախերգ***

Ես ուզում եմ գրել Երևանի մասին:

Վերջերս ես եղա մեր մայրաքաղաքի Կիրովի անվան մանկական զբոսայգում և մի անգամ էլ հիշեցի հին Երևանը: Ես հիշեցի հին Երևանը և հատկապես գավառական այդ մայրաքաղաքի կամ մայրաքաղաքի այն վայրերը, որտեղ փոխված է հիմա՝ սաղարթախիտ ծառերով և գարնանային թարմությամբ շնչող ծառուղիներով հարուստ Կիրովի անվան մանկական զբոսայգին: Եվ ամեն անգամ, երբ առիթ է լինում գրել նոր Երևանի մասին, չես կարող չհիշել հինը: Չես կարող չհիշել հինը և

չգարմանալ,- այդ և՛ ըբ էր: Այդ և՛ ըբ էր: Ճիշտ այստեղ...

Բայց դա չի մտնում իմ գրավոր խոհերի և մտորումների նախերգում: Այդ բուն երգն է, տխրությամբ ու նայիրյան վշտով թովուն մի երգ, որը սակայն վերջանում է զվարթ, առնական, շենշող, մեր մեծ ներկայի և հաղթական ապագայի նման:

Ես իմ նախերգով միայն ակնարկում եմ, որ ուզում եմ գրել Երևանի և հատկապես նրա այն վայրերի մասին, որտեղ փռված է հիմա՝ երգող ծառերով և շնչող ծառուղիներով հարուստ Կիրովի անվան մանկական զբոսայգին:

Երգ առաջին, կամ հին Երևանի ամենահիշարժան անկյունը

Ոչ Շիլայի մահլի հողաշեն և կավաշեն տնակները, ոչ հնամենի Կոնդն՝ իր կոնդապատկան շրջակայքով, նիստուկացով և բարդիների խշշոցով, չկարողացան դառնալ հին Երևանի կենցաղային ու տեղագրական կենտրոնը:

Երբ հիշում ես հին Երևանը, առաջինը, որ փռվում է հիշողությանդ լուսարձակի տակ, դա Ղանթարն է և նրա դանթարական

«հարստությունները»:

Այդ այն է, ինչ Աբովյանի օրերին կոչվել է «չարսու բազար», որի մասին անմոռանալի էջեր է թողել անհայտ ճանապարհորդ Ջիովանելլին և հայտնի վիպերգակ Ակսել Բակունցը, որդի Ստեփանի, ի գեղջեն Գորիս: Սակայն այն, ինչին վերահասու եղավ իմ սերունդը, ամենևին նման չէր իտալացի վանական, անհայտ ճանապարհորդ Անտոնիո Ջիովանելլու նկարագրած կախարդական չարսու բազարին: Դեռ 1840 թվին անհետացել էին և չարսու բազարի բակում շրջող սիրամարգերն ու դրախտային թռչունները, շատրվանն ու նման հազար ու մի հրաշալիքներ:

Մի դար հետո, Ակսել Բակունցի նկարագրությամբ «...մնում էին անհուն հարստությունը վկայող բազմաթիվ կիսախարխուլ կրպակներ, որոնց մի մասն իսպառ քանդել էին ռուսները և աղյուսներն օգտագործել բերդի նոր գորանցի համար...»:

Ինչին որ հասավ իմ սերունդը, դա ոչնչով նման չէր ոչ իտալացի ճանապարհորդի տեսած, ոչ գորիսեցի վիպերգակի նկարագրած չարսու բազարին: Սակայն արդարության դեմ մեղանչած կլինեինք, եթե

ուրանայինք, որ Ղանթարն է հին Երևանի ամենահիշարժան և տեսարժան վայրը:



### ***Երգ երկրորդ. Ակսել Բակունցի հետ***

Նրա հետ հաճախ մենք լինում էինք այս վայրերում և գնում Կապույտ մզկիթի գովաստուն քակր «պարսկական թեյ» խամելու:

— Երևան, չարսու քաղաք,- ասում էր նա ու նայում շուրջը,- կարող ես պատկերացնել, թե ի՞նչ կլինեն այս վայրերը 50-60-ական թվականներին,- ասում էր, մտածում ու եզրափակում,- չես ճանաչի:- Աբովյանը եղել է այս տեղերում,- շարունակում էր քարձրաձայն մտածել նա,- հարյուր տարի է անցել: Բայց եթե այսօր նա հրաշքով անցներ այս տեղով, նա չէր զարմանա, կճանաչեր հին վայրերը: Բայց ահա՝ 50-60 թվերին, այս ամենը, ինչ տեսնում ես, հիշողություն կդառնա, հե-ռու՜ հիշողություն... Ու ժպտում էր իր կապույտ, հստակ աչքերով: Հե-ռու՜ հիշողություն:

Շոգ է, երևանյան ամառնային այրող արև: Փոշու միջով քայլում ենք, ինչպես ձմռան ձյունների միջով: Նա ոտքը խփում է մի քարի ու շարժում տեղից.

— Գուցե Աբովյանի ոտն էլ է կպել էս քարին: Իսկ 50-60 թվերին դու չես տեսնի մի քար, որին կպած լինեն մեր ոտները: Չես գտնի: Նա ժպտում էր իր խոհերին, ինքն իրեն և կրկնում.  
— Երևան, չարսու բազար...

### *Երգ երրորդ.*

Ես չեմ ուզում կրկնել այն, ինչ նկարագրել եմ ին «Երիտասարդության սեմին» գրում՝ Ղանթարի մասին: Ես այնտեղ նկարագրել եմ, այսպես կոչվող, նախահեղափոխական Ղանթարը, այն Ղանթարը, որը գոյություն ուներ մինչև 1920 թվականը:

Բայց չէ՞ որ Ղանթարը պահեց իր գոյությունը դեռ երկար տարիներ: Երևանի տժվժիկն ու Վանի ժաժիկը դեռ երկար տարիներ դիմացան ու Ղանթարը երկար տարիներ հպարտանում էր թե մեկով, թե մյուսով: Բայց փոխվել էին ժամանակները: Կոռպերացիան, պետական առևտուրը քայլ առ քայլ առաջանում էին, ուժեղանում, մասնավորը նահանջում էր ու թուլանում:

Այնտեղ, մանկական զբոսայգու հյուսիսային կողմում, որտեղ այժմ կանգնած է «Արարատ» տրեստի բնակելի շենքը, կամ հենց այնտեղ, ուր մանկական հրապարակն է և կարուսելը, մանր խանութներ էին, ուր ապաստանել էին չթավաճառներն ու մանր առևտրականներ: Նրանք անգործությունից ու ձանձրությունից մոտենում էին իրար և [անընթեռն.] դեմքով ուրախ կատակում.

— Ախանես աղա՞, առուտուր անելով մեռար, չերթա՞նք մի փարթի նարդի խաղանք:

— Ռուբեն աղա, էսպես որ էրթա գործը, Աֆրիկով կդառնաս ու մեզ էլ բարև չես տա...

Ղանթարի շուրջը չէին թափառում այլևս անապաստան մանուկները: Նրանք տեղավորված էին պետական մանկատներում:

Մինչև 20 թվականը «սպեկուլյանտ» կոչումը պաշտոնի պես բան էր.

— Քո մարդը ի՞նչ գործի է, տիկին Սաթենիկ:

— Հարկային տեսուչ:

— Հարկային տեսու՞չ,- արհամարհանքով ասում էր խոսակիցը,- էլ գործ չի՞ գտել: Իմ Սետրակը սպեկուլյանտ է:

Քսան թվից հետո «սպեկուլյանտ»-ը դարձավ, նախ թեթև, միջին և ի

վերջո՝ ծանր հայհոյական խոսք:Մի օր էլ լուր տարածվեց, որ Ղանթարն իր շրջակա ղանթարական խանութներով և հողերով ընկել է «պլանի տակ»:

— Լավ,- հարցրեց Ախանես աղան Փանոս աղային, երբ երեկոյան փակում էին խանութները,- ապա մասնավոր առևտրականները ո՞նց պիտի գործ անեն:

— Մասնավորները գործ չպիտի անեն,- պատասխանեց Փանոս աղան,- մասնավոր առուտուրը պիտի վերջանա:

Ախանես աղան նայեց իր խոսակցին և խորին համոզմունքով առարկեց.

— Առանց մասնավոր առուտուրի պետություն չի լինի:

— Կլինի,- մոմոաց Փանոս աղան և երկուսն էլ լռեցին:

### ***Երգ չորրորդ. Վիլյամ Սարոյանի հետ***

Առաջին հնգամյակի վերջերին Երևան էր եկել դեռ երիտասարդ ամերիկյան գրող Վիլյամ Սարոյանը: Մենք գնում էինք Կապույտ մզկիթ թեյ խմելու: Ղանթարն ապրում էր իր վերջալույսը:

Մեր ճանապարհը կտրեց մի գյուղացի իր ավանակով:


— Այս էջը ես եմ,- ասաց Սարոյանն իր անգլերենանման հայերենով:

— Ինչու՞,- զարմացա ես:

— Իմ հայրս միշտ ինձի կըսեր,- երբ մեծանաս, էջ պիտի դառնաս,- եղավ պատասխանը:

Վիլյամ Սարոյանը այլևս Երևան չի եկել: Եթե հիմա գա, հազիվ թե հիշի իր հորը:Այո, եթե այսօր Երևանի փողոցներում ավանակի հանդիպես, բռնիք և հանձնիք միլիցիային: Միլիցիան կհանձնի իր օրինական տիրոջը՝ կենդանաբանական այգու տեսչությանը...





*Երգ հինգերորդ. Մկրտիչ Արմենի ահազանգը*

«Մեռնում է հին, դարավոր Երևանը», - ահազանգեց արձակագիր Մկրտիչ Արմենը դեռ 1931 թվականին իր «Երևան» վեպում:

Եվ ի՞նչ էր այդ հին Երևանը, - հողաշեն տներ՝ տափակ կտուրներով,

գավառական փոշի, գավառական ձանձրույթ:

Եվ ինչ էր այդ հին Երևանը,- նեղ, ծուռուժուռ քուչաներ, ռուսական եկեղեցի, պարսկական բաղնիք ու չայխանա, հայկական [անընթեռն. ] ու թեմական քաշքշուկ...

Երևան բաղ եմ արել...

Սովետական կարգերը թե տվին հանճարեղ ճարտարապետին ու աշխարհ եկավ նոր թամանյան Երևանը:

Աշխարհ եկավ և սկսեց աճել Սասունցի Դավիթի նման, արագ, տիրական, ամուր: Երևանը դուրս եկավ իր ափերից, ասպատակեց բլուրները...[անընթեռն. ] վերածնեց Արաբկիրը, Շահումյանը, Նոր Արեշը, Քանաքեռը...

Հին Երևանը, որն Արմենի գրքում վառվում է արևելյան ֆանտաստիկ, կախարդական գույներով, այսօր պատմություն է ու ռոմանտիկա: Դրա փոխարեն որոտում է նոր Երևանը՝ իրական, շոշափելի, տեսանելի և լսելի Երևանը, շքեղ քաղաքամայրը Սովետական Հայաստանի:

### *Վերջերգ*

Գարնանային արևով ողողվել է Երևանը:

Գուցե ոչ մի տեղ գարունն այնպես զգալի չէ, որքան մեր մայրաքաղաքի

Կիրովի անվան մանկական զբոսայգում: Եվ այդ հասկանալի է:


Մանկությունն ինքը հենց գարունն է, անկախ նրանից, թե գարո՞ւն է, ամա՞ռ, աշո՞ւն է, թե՞ ձմեռ...

Գարունը կրկնակի գարուն է Կիրովի անվան մանկական այգում:

Գարուն՝ գարնան հետ, գարուն՝ ողողված գարունով, գարուն՝

գարունված գարուններով: Եվ ամեն անգամ, երբ առիթ է լինում գրել նոր

Երևանի մասին, չես կարող չհիշել հինը...



*Քո կյանքի ճանապարհը ուղիղ չեղավ, ինչպես լարախաղացի ճանապարհը, ոչ էլ միշտ փշոտ ու տատասկոտ, ինչպես մարգարեների ճանապարհը: Հաճախ դու մեղանչեցիր քո դեմ, քո սրտի, հոգու, խղճի դեմ, բայց հավատա, ով դու, որ նայում ես հայելու միջով տխուր աչքերով, քո ժողովուրդը քեզ կների, որովհետև դու մարդ ես եղել, և այն ամենը, ինչ մարդկային է, խորթ չի եղել քեզ համար... Մեծ ու փոքր ընկերներ ունեցար դու, մեծ ու փոքր սերեր, մեծ ու մանր կրքեր, կորցրեցիր ու գտար, հաճախ, երբ կորցրեցիր՝ ուրախացար, երբ գտար՝ տխրեցիր, բայց դու անկեղծ եղար, քո մոլորությունների մեջ անգամ՝ անկեղծ... Ով դու, որ հայելու միջից նայում ես ինձ թափված գանգուրներով, ալեհեր մազերով պսակված ճակատով ու այնուամենայնիվ ժպիտով: Ես գիտեմ քո անտանելի բնավորությունը:*

[Աղբյուրը՝ Հովիկ Չարխչյանի բլոգ](#)